մի կառուցուածք: Ուրիշ խօսքով, մենք ուժեղ ենք, դրեթէ անխոցելի՝ բացասակա՛ն (թէեւ նոյնչափ կարեւոր) քննադատութեան մարզի մէջ, բայց թոյլ՝ դրական քաղաքականութեան սահմաններում:

Մենք շատ ենք խօսում եւ լսում ա՛յն մասին, թէ ինչո՛ւ այսինչը այսպէս չպիտի լինի, իսկ շատ քիչ, թէ հապա ի՛նչ պիտի լինի եւ մանաւանդ՝ ինչպէ՛ս:

Աւելին դեռ: Մենք կարծես ընազդօրէն խուսափում ենք հարցերը դնելու իրենց ամբողջութեա՛նը մէջ: Փոխանակ սպեղանիի անունը տալու, մեր մատը դնում ենք վէրքի վերայ ու ծածկում այն: Եւ սակայն մեր քաղաքական խոցերը այնքան են խորը, մեր հայրենիքի եւ մեր ժողովուրդի գոյութիւնը չօշափող խնդիրները այնչափ կարօտ են բազմակողմանի լուսաբանութեան եւ բուժիչ միջոցների, որ անտես չպիտի արուին երկրորդականներն իսկ:

* * *

Որպէսզի կարողանանք մօտենալ առաջադրուած հիմնական հարցի՝ Հայաստանի եւ իր դրացիների փոխադարձ յարաբերութեան լուսաբանութեան, որպէսզի մանաւանդ կարող լինինք մշակել մեզ համար քաղաքական այն ուղեգիծը, որով պիտի ընթանանք լաւագոյն եւ առաւելագոյն շահեր ապահովելու համար մեր երկրին ու ժողովուրդին, անհրաժեշտ է ամենից առաջ, որ մեզ համար յստակօրէն պարզենք մեր եւ մեր շուրջի ԻՐԱԿԱՆՈՒԹԻ՛ՒՆԸ. թէ՝ ի՛նչ ենք ներկայացում մենք եւ ինչ՝ մեր դրացիները. թէ՝ որոնք են այն բովանդակ ուժերը, որ կազմում են մի կողմից մեր եւ միւս կողմից մեր հարեւանների քաղաքական գոյութեան խարխիսը:

Այս անհրաժեշտ է նախապէս գիտնալ նրա՛ համար, որ վերջ ի վերջոյ ամէն մի բանական քաղաքականութեան խարխիսը իրականութի՛ւնն է, իսկ նրա ելակէտը՝ նոյն այդ իրականութիւնի՛ց բխող ուժը:

Մեր քաղաքական միտքը այժմ յամենայն դէպս այնչափ է հասունացել — կամ ենթադրել պէտք է թէ հասունացել է,— որ ինքնին հասկանալի է համարում այդ նախադրեալները: Իսկ ամէն մի իրականութիւն ունի հարկաւ իր տարբե՛ր կողմերը եւ անհրաժեշտ էլ չէ՛ որ նրանք ամենը բացարձակապէ՛ս առարկայական բնոյթ կրեն: Եւ ոչ իսկ ուժ ասելով հասկանալու է սոսկ նիւթակա՛ն ուժը:

Երբեմն զաղափարական, բարոյական ուժերը նոյնչա՛փ վճռական նշանակութիւն ունին, որչափ նիւթականը: Միայն թէ՝ այդ ուժերը չլինին երեւութական, երազական, այլ իրական: Միայն թէ նրանք լինին մե՛ր մէջ ամբարուած, մե՛զ տրամադրելի, եւ ոչ թէ մեզնից դուրս, մեզ անհասանելի, ապա ուրեմն՝ անիրական:

Արդ, ամէն մի պետական միաւորի քաղաքակա՛ն իրականութիւնը արտայայտւում է նախ եւ առաջ երկու հիմնական տուեալներով: Մէկ՝ նրա հողային (տերրիտորիալ) եւ մէկ էլ նրա ազգաբնակութեան տարողութեամբ: Մերթ գերակշռող դեր ունի մէկը, մերթ՝ միւսը: Ամբողջութի՛ւն կազմում են երկուսը միասի՛ն միայն: Տուեալ պետականութեան ամենատեսակ, բովանդակ ուժերի աղբիւրն էլ նրանք են:

Տեսնենք այժմ, թէ ո՛րն է այդ տեսակէտից մեր իրականութիւնը, եւ որը՝ մեր դրացիներինը:

II

Նախ եւ առաջ առնենք ԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ:

Մեր հայրենիքը իր ներկայ սահմաններով գրաւում է ընդամէնը 30,000 քառակուսի քիլոմէթր տարածութիւն: Նա, այդ փոքրիկ երկիրը, ծուարած է Սեւանայ լճի շուրջը, Փոքր Կովկասի երկու կողերին: Մեծագոյն մասով լեռնոտ երկիր է եւ փոքր չափով միայն՝ դաշտային: Արարատեան դաշտի մի զգալի մասը մինչեւ իսկ — Սուրմալու, Շարուր եւ Նախիջեւան — դուրս է գտնւում այդ սահմաններից:

Արեւմուտքից Հայաստան սահման ունի Տաճկաստանը, հարաւից՝ Նախիջեւանի ինքնավար հանրապետութիւնը, որ առնուած է Ադրբէջանի մէջ: Արեւելեան կողմը, մի-երկու տասնեակ քիլոմէթրի վրայ (Զանգեզուրում), Երասխը կազմում է Հայաստանի եւ Պարսկաստանի սահմանը: Արեւելքում աւելի ընդարձակ սահման ունի Ադրբէջանը, հիւսիսում էլ տարածւում է Վրաստանը: